



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» դեկտեմբեր 2021 թ.

N 72-Կ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ,  
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ,  
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ՄԵՐԺՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով, 32-րդ հոդվածի 7-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 7-րդ կետերով, 37-րդ հոդվածի 7-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 22 որոշումը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար 9 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 9 ներդիր, 2 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա և թվով 2 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների փորձաքննության լիցենզիա և թվով 2 ներդիր, (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 3 ներդիր, 2 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 2 ներդիր, 3 իրավաբանական անձանց քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 4 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 ներդիր, 2 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 2 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 2 ներդիր, 1 իրավաբանական անձի շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թվով 1 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիան և թվով 5 ներդիրը (համաձայն հավելված 4-ի):

5. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման լիցենզիայի և 1 ներդիրի, 1 իրավաբանական անձի ինժեներական հետազննման լիցենզիայի գործողությունը (համաձայն հավելված 5-ի):

6. Մերժել 14 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 3 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության, 1 իրավաբանական անձի ինժեներական հետազննման համար ներկայացված լիցենզիայի և ներդիրի տրամադրման հայտերը (համաձայն հավելված 6-ի):

7. Կասեցնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 12 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 8 լիցենզիայի և 12 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 7-ի):

8. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

2) Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

12/9/2021

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2021թ. «դեկտեմբեր» «09»  
 N 72-Շ հրամանի

**ՑԱՆԿ**

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 9 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիայի և թվով 9 ներդիրի, 2 իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում շինարարական որակի տեխնիկական հսկողության լիցենզիայի և թվով 2 ներդիրի, 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիայի և թվով 2 ներդիրի տրամադրման.

h/h	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1.	«ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ 1» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ, ՄԱԼԱԹԻԱՅԻ Փ., 68/74 ՀՎՀՀ 01312001 Դ-2721-2021 ՀԱՄԼԵՏ ԺՈՐԺԻԿԻ ԳԱՐՍԵՎԱՆՅԱՆ AR0588657	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
2.	ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԼԱՎԻԿԻ Ա/Ձ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԼԱՆՋԱՅԻՆ Փ., 18 ՀՎՀՀ 66895653 Դ-2725-2021 ԱՐՏԱՎԱԶԴ ՍՈՒՐԻԿԻ ՉՈՐԱՆՅԱՆ AT0485735	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
3.	«Գ.Գ ՇԻՆ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ԷՐԵՐՈՒՆԻ, ԽԱՂԱՂ ԴՈՆԻ Փ., 31, 44 ԲՆ. ՀՎՀՀ 00500699 Դ-2726-2021 ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ 008517088	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական
4.	«ԷՄ ՍԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՎԵՐԻՆ ՇԵՆԳԱՎԻԹ 2 Փ, 7/2 շ, 50 բն ՀՎՀՀ 02293328 Դ-2713-2021 Դ-2714-2021 ԱՇՈՏ ՄԻՇԱՅԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ AR0551646	Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն՝ 4)տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ).